ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի
նախագահ պարոն *Ա. Թռչունյանին*
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ *Հրաչիկ Սիմոնյանից* և
Վարդգես Միքայելյանից

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նիստի ընթացքը միանգամ ևս մեզ բերեց այն համոզման, որ այդ խորհրդում ստեղծված մթնոլորտը թույլ չի տալիս կատարել գիտական հարցերի անկողմնակալ քննարկում և լուծում: Արդյունքում գիտական աստիճաններ են շնորհում պաշտպանության ներկայացված անարժան գործերի հեղինակների և, ընդհակառակը, փակվում է ճանապարհը շնորհալի երիտասարդ կադրերի առջև: Մեր կարծիքով նշված երևույթը մեծապես պայմանավորված է նաև նիստը ղեկավարողի անսահման իրավունքներով ու կամայականությամբ, մի հանգամանք, որն իր բացահայտ դրսևորումը գտավ խորհրդի վերը նշված նիստում:

Ստեղծված պայմաններում մենք անիմաստ ենք համարում մեր հետագա մասնակցությունը խորհրդի աշխատանքներին:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ՝
ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

10.12. 2003